ASUE
SPECIALIZATION • EXPERIENCE • OPPORTUNITY
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ARMENIAN STATE UNIVERSITY OF ECONOMICS
АРМЯНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ ЭКОНОМИЧЕСКИЙ УНИВЕРСИТЕТ

N 01/01-582

«16» 05 2025

ՈՐՈՇՈՒՄ

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի ռեկտոր Արմեն Գրիգորյանի Հրաչյա Վարդանյան ԱՁ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի կողմից 2025 թվականի մարտի 27-ին հայտարարված ՀՊՏՀ-ԳՀԱՊՁԲ-25/ՇԱ-2 ծածկագրով ընթացակարգին հայտ ներկայացրած մասնակից Հրաչյա Վարդանյան ԱՁ-ն (այսուհետ՝ Մասնակից) ճանաչվել է ընտրված մասնակից 20-րդ չափաբաժնի մասով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով 2025 թվականին ապրիլի 25-ին Մասնակցին ներկայացվել է պայմանագիր կնքելու, որակավորման և պայմանագրի ապահովումներ ներկայացնելու առաջարկ, սակայն Մասնակցի կողմից օրենքով սահմանված ժամկետում՝ ծանուցումը ստանալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 2025 թվականը մայիսի 5-ը, պայմանագիրը, որակավորման և պայմանագրի ապահովումների չի ներկայացվել:

Վերոգրյալով պայմանավորված՝ Մասնակիցը «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն (Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո սույն օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ժամկետում չի ստորագրում պայմանագիրը կամ պատվիրատուին չի ներկայացնում պայմանագրի և (կամ) որակավորման ապահովումը, իսկ կնքվելիք պայմանագրով կանխավճար նախատեսված լինելու դեպքում՝ նաև կանխավճարի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից), գնահատող հանձնաժողովի որոշմամբ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

Գնահատող հանձնաժողովը 20-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից է ճանաչվել հաջորդ տեղ զբաղեցրած մասնակիցը համաձայն հարվերի 8.12-ից 8.18-րդ կետեր՝ (Ընտրված մասնակցի կողմից պայմանագիրը չկնքելու (հրաժարվելու) կամ պայմանագիր կնքելու իրավունքից զրկվելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը):

20-րդ չափաբաժնի մասով կնքված պայմանագրի մասին հայտարարությունը հրապարակվել է տեղեկագրում 2025 թվականի մայիսի 13-ին:

Հայաստանի Հանրապետություն,
Երևան 0025, Նալբանդյան 128
Հեռ.՝ +374 10 593423, Ֆաքս՝ +374 10 528864
Էլ.փոստ՝ info@asue.am, www.asue.am

Republic of Armenia,
Yerevan 0025, Nalbandyan str. 128
Phone: +374 10 593423, Fax: +374 10 528864
E-mail: info@asue.am, www.asue.am

Республика Армении,
Ереван 0025, Налбандяна 128
Тел.: +374 10 593423, Факс: +374 10 528864
Эл.почта: info@asue.am, www.asue.am

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա: Նույն մասում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին:

ՈՐՈՇԵՑԻ

Հրաչյա Վարդանյան ԱՁ-ի ներքոհիշյալ տվյալները ուղարկել լիազորված մարմնին՝ ՀՀ Ֆինանսների նախարարությանը, Հրաչյա Վարդանյան ԱՁ-ին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

Ռեկտոր՝ **Ա. Գրիգորյան**

Կատարող՝
գնումներ համակարգող
Գոհար Թադևոսյան
հեռ. 593-483

Մասնակցի						
անվանումը	ՀՎՀՀ/ֆիզ. անձի դեպքում հանրային ծառայության համարանիշը	գործունեության հասցեն	գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու իրավական հիմքը			ցուցակում ներառելու մասին պատվիրատուի ղեկավարի կայացրած որոշման ամսաթիվը և գնման ընթացակարգի ծածկագիրը
			խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը	խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը	որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից	
Հրաչյա Վարդանյան ԱՁ	48039802	Ք. Վեդի, Պ. Սևակի 6			X	16.05.2025թ. ՀՊՏՀ-ԳՀԱՊՁԲ-25/ՇԱ-2